ք. Երևան, Ս. Դավթի 87ա **<<05>> նոյեմբերի 2020թ.**

Անհատ ձեռնարկատեր Կարեն Այոշայի Հայրապետյան
ՀՎՀՀ 78616594 հասցե՝ Սյունիքի մարզ
ք.Կապան Ազատամարտիկների փ.

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Հայտնում ենք Ձեզ, որ ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների, 27.10.2020 թվականի դրությամբ ԱՁ Կարեն Հայրապետյանի դրոշմանիշային վճարի գծով չկատարված պարտավորությունը կազմում է 60.000 դրամ, այդ թվում ապառք՝ 60.000 դրամ:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունները գանձելու վերաբերյալ <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Ի կատարումն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցումը ուժի մեջ մտնելու օրվա 3-րդ օրը, ժամը 11:00-ին ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և (կամ) առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87ա:

Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ ԻՎ հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ՝ Մ.Մաթևոսյան

հեռ. 011-54-91-91 /91-65/